

ՀՄՀ-Հայաստան ծրագրի ՇԽ անդամներին և
քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին

Հարգելի գործընկերներ,

Ի պատասխան ՇԽ վերջին ընտրությունների վերաբերյալ ՇԽ անդամների և ՇԽ անդամության թեկնածուների կողմից բարձրացված հարցերի հայտնում եմ.

- ՀՄՀ-Հայաստան ծրագրի Շահառուների խորհուրդը, որպես ՀՀ քաղաքացիական հասարակության կայացածության վառ արտացոլում, 2009-2010թթ. ՇԽ նոր կազմի ընտրությունների իրականացման ամբողջ գործընթացի կազմակերպումը, ղեկավարումը և իրականացումը վերցրել է իր ձեռքը՝ համապատասխան փոփոխություն կատարելով ՇԽ անդամների ընտրությունների կարգում: Ի տարբերություն նախորդ երեք տարիների փորձի, այս տարի ՇԽ ընտրական հանձնաժողովը ձևավորվել է ՇԽ կողմից՝ ընտրության միջոցով: Այսպիսով՝ ՇԽ ընտրական հանձնաժողովը հանդիսացել է ՇԽ կողմից ստեղծված մարմին և ՇԽ-ն, համաձայն իր կողմից մշակված ընտրությունների կարգի, իրականացրել է ՇԽ ընտրական որջ գործընթացը, որը բարձր է գնահատվում ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի կողմից: 2009-2010 թթ. ՇԽ ընտրությունների ընթացքում ՀՄՀ-Հայաստանը հանդես է եկել բացառապես որպես օժանդակող մարմին և անմիջական որևէ առնչություն չի ունեցել այդ գործընթացին, որն անչափ կարևոր էր ծրագրի իրականացման այս դժվարին փուլում, որի համար ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ը շնորհակալություն է հայտնում ՇԽ-ին և ընտրական հանձնաժողովին:
- ՇԽ ընտրությունները տեղի են ունեցել ս./թ. սեպտեմբերի 26-ին և, ինչպես արդեն նշվեց, իրականացվել են ՇԽ ընտրական հանձնաժողովի կողմից՝ ՇԽ առաջնորդությամբ: ՀՄՀ-Հայաստանն օժանդակել է ընտրությունների իրականացմանը՝ ապահովելով համապատասխան տարածք, հարմարություններ և անձնակազմի օժանդակություն արդար և թափանցիկ ընտրությունների իրականացման համար: Ընտրությունների գործընթացը բաց է եղել և՛ քաղաքացիական հասարակության, և՛ ՋԼՄ-ների ներկայացուցիչների համար: Ընտրական գործընթացին հետևել են մի շարք պաշտոնապես գրանցված դիտորդներ և քաղաքացիական հասարակության կամավորներ: Ընտրությունների ավարտից հետո ՇԽ ընտրական հանձնաժողովի կողմից ընտրության արդյունքները ամփոփվել և հաստատվել են միաձայն, կազմվել է համապատասխան արձանագրություն, հայտարարվել են ընտրությունների վերջնական արդյունքները, ՀՄՀ-Հայաստանին է տրամադրվել արձանագրությունը՝ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի ինտերնետային կայքում տեղադրելու նպատակով, որն էլ արվել է: Դիտորդների և այլ ներկաների կողմից որևէ հարց չի բարձրացվել և չի արձանագրվել: Ընտրության հետ կապված բոլոր փաստաթղթերը ՇԽ ընտրական հանձնաժողովի կողմից դրվել են ծրարների մեջ, փակվել և հանձնվել են ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ին ի պահ:
- 2009թ. հոկտեմբերի 1-ին, բավարարելով Աշոտ Ալեքսանյանի և Գաբրիել Բալայանի խնդրանքը, ՇԽ ընտրական հանձնաժողովն իրականացրել է ՇԽ ընտրությունների քվեաթերթիկների վերանայում՝ ստուգելու համար վերջիններիս վավերության կամ անվավերության փաստը: Վերանայումից հետո ՇԽ ընտրական հանձնաժողովը ձայների մեծամասնությամբ ՇԽ ընտրությունների արդյունքները թողել է անփոփոխ, կազմել է արձանագրություն և տրամադրել է այն ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ին՝ ինտերնետային կայքում տեղադրելու համար, որը և կատարվել է: Վերանայված փաստաթղթերը կրկին դրվել են ծրարների մեջ, ստորագրվել են և հանձնվել են ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ին ի պահ:

Հարկ են համարում նշել, որ քվեաթերթիկների վերանայման գործընթացը ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի կողմից ձայնագրվել է իր նախաձեռնությամբ և բացառապես ներքին օգտագործման համար:

- Ի պատասխան որոշ մեջբերումների այն մասին, որ ՀՄՀ-Հայաստանի ինտերնետային կայքում տեղադրված տեղեկատվությունն ի համեմատություն նախորդ տարիների թերի է, հայտնում են, որ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ը պատրաստ է ուղղելու բացթողումը, եթե այդպիսին կա, և ինտերնետային կայքում տեղադրելու նշված տեղեկատվությունը: Սակայն, ինչպես նշվեց, այդ փաստաթղթերը փակ ծրարներով ՇԽ ընտրական հանձնաժողովի կողմից հանձնված են ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ին և ՊՈԱԿ-ն իրավասու չէ բացելու դրանք՝ առանց ՇԽ հանձնարարության: ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ը պատրաստ է բացելու ծրարները և ինտերնետային կայքում տեղադրելու պահանջված տեղեկատվությունը՝ ՇԽ համապատասխան որոշման և լիազորության ստացման պարագայում:
- ՀՄՀ-Հայաստանի առաքելությունը կայանում է Հազարամյակի մարտահրավեր համաձայնագրի և Կառավարման համաձայնագրի դրույթների կիրառության և պահպանության ապահովումը, որը և կատարվել է: Այդ լիազորությունները սահմանված են 2006թ. մարտի 27-ին ՀՀ Կառավարության և ԱՄՆ-ի, ի դեմս Հազարամյակի մարտահրավեր կորպորացիային միջև ստորագրված Հազարամյակի մարտահրավեր համաձայնագրի Հավելված 1-ի, 3 (d) (iv) կետում, ինչպես նաև 2006թ. սեպտեմբերի 29-ին ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի, ՀՀ Կառավարության ի դեմս ՀՀ Կառավարության աշխատակազմի և Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի միջև ստորագրված Կառավարման համաձայնագրի 3-րդ հոդվածում: ՇԽ ընտրությունների մասով ՀՄՀ-Հայաստանը չի հանդիսանում տեղեկատվությանը տիրապետող սուբյեկտ և իրավասու չէ միանձնյա բացելու և/կամ տրամադրելու որևէ կարգի տեղեկատվություն: Այդ իրավասությունը վերապահված է բացառապես ՀՄՀ-Հայաստան ծրագրի ՇԽ-ին և/կամ վերջինիս կողմից լիազորված մարմնին:
- ՀՄՀ-Հայաստանը պատրաստ է տրամադրելու ցանկացած տեղեկատվություն՝ ՇԽ կողմից համապատասխան որոշման առկայության դեպքում: Ավելին. 2009թ. հոկտեմբերի 13-ին ժամը 15:00-ին Կոնգրես հյուրանոցի Պիկասո սրահում կայանալիք առաջին նիստին ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ը՝ ՇԽ համապատասխան որոշման դեպքում անմիջապես կտրամադրի ՇԽ-ին և/կամ վերջինիս կողմից լիազորված անձանց ՇԽ ընտրություններին առնչվող փակ ծրարները՝ փաստաթղթերով հանդերձ:

ՀՄՀ-Հայաստան ծրագրի ՇԽ նիստերը բաց են և՛ քաղաքացիական հասարակության, և՛ ՋԼՄ-ների ներկայացուցիչների համար: Այս ձևաչափը գործել է մինչ այժմ և պահպանվելու է հետայսու:

Ծրագրի գործունեության երեք տարիների ընթացքում ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ն ակնառես է եղել քաղաքացիական հասարակության առաջընթացին, կազմակերպվածությանը և ինքնադրսևորմանը և հավատում է ՇԽ և քաղաքացիական հասարակության ունակությանը՝ ինքնուրույն, կառուցողական և փոխադարձ հարգանքի մթնոլորտում լուծելու ծագած բոլոր հարցերը:

Հարգանքով՝

ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն

Արա Հովսեփյան